

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

| | |
|-------------------|--------|
| Պուշկարինյ համար | 12 ֆր. |
| սարկիսի վեցամսեայ | 7 " |
| Արսասահմանի համար | 15 ֆր. |
| սարկիսի վեցամսեայ | 8 " |
| Ավերիկայի համար | 8 ֆր. |
| սարկիսի վեցամսեայ | 1.50 " |

Ծանուցում տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. հրեֆհն ա կի սնցամեհրու համար 20 0/0 գեղջ կրլայ:

Վառնայի համար մեկ ֆ 40 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՍՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՆ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՐԱԿՈՒՄԻ ՉՈՐԵՔՇԱԲԻՒՆ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАЯЪР

Նախկին և զբաղվող շարժումը խմբագրության հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoun" Varna (Bulgarie)

Պուշկարինյ համար մեկ ֆ 15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար մեկ ֆ 20 ՍԱՆԹԻՄ

Գրությունից ևս չեն գրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԷ Ե ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԻՆՉ ԿԸ ՑԱՆԵՍ՝ ԱՅՆ ԿԸ ՀՆՁԵՍ

Կարճատեւ խաղաղութիւնից յետոյ կրկին Կովկասից սկսեցին մահմետական տարրի կատաղութեան լուրերը հասնել. Ռուս լիբր վարչութեան շնորհիւ երեսն առած թաթարները այսօր Բագուի և Շուշիի շրջանում և այդ երկու քաղաքներում իրենց հնազարեան սրածուծեան և աւերումի բնազդներով արբշխու Կովկասը բացարձակօրէն անխիչսանութեան են մատնել. Թաթարները այլ եւս միայն հայերի դեմ չէ որ դուրս են գալիս պինգած, այլ ռուս դեռ երէկ իրենց զէնք բաժանող ոստիկանութեան և զինւորներին:

Կառավարութեան զօրքերը թնդանօթներով միասին կատարեալ պատերազմի մէջ են. նրանք արդէն մի քանի գիւղեր, Բաքուի և Շուշու շրջանում, աւերակի են վերածելու ըմբոստացած թաթարներից մի քանի հազար հոգու մահմետի գողը զերկել:

Բաքուի նախահորերը գրեթէ բոլորն էլ հրդեհուած են, մեծ մասամբ թաթարների ձեռքով, և հոչակաւոր գործարանատէր նօթէլի յայտարարութեան համաձայն այս տարի Բաքուն չը պէտք է կարողանայ նախ արտահանել և գործերը մի քիչ կարգի մըտնելու համար գրեթէ մի տարվան անդուռաշխատանքի պէտքը կայ:

Ռուսական լիբր վարչութիւնը թաթարներին փայփայեց, նրանց Կազանային բնազդները արթնացրեց, շոյեց, հայերին ճշմելու համար, ու ահա այսօր այդ գազանացած տարրը այլ եւս առանց ու է խտրութիւն զնելու ձգտում է Կովկասը աւերակի վերածել ու ստեղծել այն դրութիւնը, ինչ որ գոյութիւն ունէր թաթարների կամ պարսիկների վաղեմի տիրակալութեան օրերում:

«Ինչ կը ցանես այն կը հնձես» ասում է առածը. Ռուս կառավարութիւնը կուրացած իր սատրապների զրպարաութիւններով ուղեց մի վայրենի տարրի միջոցով շնջել հայ տարրը, որը իրօք միակ տարրն էր որ Կովկասի կերպարանը փոխեց և դարձրեց մի ծաղկած երկիր. ու այսօր իր ձեռքում երբեմն գործիք դարձած տարրը սուրը բարձրացնում է և իրեն զէնք տեղի դէմ. հրաշալի գործնական դաս ռուս կառավարութեան համար. յուսանք որ անհետեւանք չը պէտք է մնայ այդ դառն դասը:

Մեզ համար այս նոր իմպրոթիւնների միջոցին միութարականը այն է որ Կովկասի հայերը այլեւս չեն փախում թաթարների առջևից, վատար, այլ քաջութեամբ դիմադրելով խոշոր կորուստներ են պատճառում նրանց և հասկացնում որ այլեւս տրամադիր չեն իրենց կեանքերը և գոյքերը աժան ծախելու. Բայց հրամայողական պահանջէ որ Կովկասի հայերը իրենց վրէժխնդրութեան մէջ այնքան առաջ չը գնան որ նախայարձակի դիրք բռնեն դէպի իրենց թէպէտև վայրենի բայց անգիտակից գրացիները. Կովկասի հայը լուրջ ինքնապաշտպանողական զիրք պէտք է բռնէ. իրեն դէմ յարձակողներին խստի պատժել, իսկ երբեք նախայարձակ չը լինել:

Կառավարութիւնը այլ եւս հասկացաւ թէ թաթարների շոյումի մէջ շատ է առաջ գնացել ու նա ինքն է որ այսուհետեւ պիտի աշխատի զսպել իր պետական վարկը կտորոզ, երկիրը անխիչսանութեան մատնող թաթար տարրին:

Կովկասի հայը առանց ամբողջովին վստահելու կառավարութեան ներկայ տրամադրութիւններին, պարտաւոր է գիտակից հաւասարակշռութիւնը չը կորցնել...

ՎԱՐԴՈ

Ս Ա Տ Ր Ա Պ Ն Ե Ր Ը ԵՒ «Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ» Ը

Արտասահման տեղաւորված մի քանի դաշնակցական գործիչներ բռնապետութեան սատրապների նման հալածանք են սկսել «Շարժում» դէմ. Ամեն միջոց գործ է դրվում «Շարժում» ընթերցման առջեւը առնել. քարոզ, «Շարժում» դրածները սուտ հաշակելու ճիգեր. և այդ ամենը այն նպատակով որ Դաշնակցութեան պատկանող խորհուրդը ընդունակ ընկերների աջքերի առջեւ չը բացվի տխուր իրականութիւնը որ գոյութիւն ունի Դաշնակցութեան մէջ. Սեղ. կազմակերպութեան պատկանող մարգրիկը, ռուս գեներալ նահանգապետների և թուրք վալիների բռնակալական հոգեբանութիւնով սողողված, ուզում են չը կարգացվի այն թերթը որ երէկ երկիրը էին բարձրացնում, երբ նա կուում էր մէն մեծակ ամբողջ հակայեղափոխական տարրի դէմ. տապալում էր դաշնակցութեան, առհասարակ յեղափոխութեան հեղինակաւոր ահագին ժողովրդականութեամբ հակառակ անհատներին, պատրիարքին զրկում հայ եկեղեցիներում յիշվելու իրաւունքից, պատգամաւոր էր ընտրել տալիս Լահէի ժողովի համար, ջախջախում էր ինչ որ պատուոյ տեսան. և այդ բոլորը առանց դաշնակցութեան դրամական օժանդակութեան որի բրօշուրները, շնչին պրօպագանդիստները, որոնք միայն խեղճ ու տգէտ տարրին մօտեցնում Դաշնակցութեան, կլանում են ահագին գումարներ. Ոչ քիչ ժամանակ «Շարժում»ը և վարդօն լաւ էին. ուրիշները ահագին գումարներ էին կլանում շնչին գործունէութեան համար իսկ վարդօն առանց ու է դրամական նպատի իր «Շարժում» դով Դաշնակցութեան առջևից շնջում էր հակայական խոչնդոս-

ներ. կազմակերպութեան պրէստիժը բարձրացնում մինչեւ երկիրը...

Բայց այսօր «Շարժում»ը չը պէտք է կարգալ. վարդօն դաշնակցական չէ. որովհետև «Շարժում»ը նոյն կատաղութեամբ մաքառում է Դաշնակցութեան մէջ գտնված վատ, կեղծ տիպերի և նրա թերի կողմերի դէմ. էյ դուք, յեղափոխական անուան տակ թագնված թզուկ բռնակալներ... յեղափոխութիւնը շահագործողներ, «Շարժում»ը ըստ ստեղծված է հայ վատ, քիսասակար ազատագրութեան գործը չը մըռնող կամ նրան գիտակցաբար շահագործող տարրերի դէմ մաքառելու համար. և նա պէտք է մաքառէ, ինչ դրօշի տակ էլ որ գտնվեն այդ տարրերը, աւելի խիստ կերպով եթէ դաշնակցական անուն են կրում դրանք:

Փոքրիկ ու մեծ սատրապներ, այդ սատրապների փոքրիկ ու մեծ ծառաներ, այխատեցէք, ճիգեր թափեցէք, «Շարժում»ի առջեւը կտրելու... մենք դրանից ոչ մէկ վախ չունենք. գողացէք սրճարաններից, փոստատներից, ցրվիչներից, բաժանորդներից, բայց միշտ և ամեն տեղ մուտք կը գտնի նա, որովհետև նա կենսարար ու զով շուր է մտցնում այն շրամբարի մէջ որը դուք ուզում էք հոտեցնել կանգնած, լճացած շրով, ու հայ ժողովրդին ներկայացնել իբրև թաթար կենսարար. թէև և նրա ամեն մի կաթիլը վարակիչ ու մահաբեր է:

Գալարվեցէք նրա ամեն մի սողի տակ. ցնցվեցէք, ահաաներ կրճատացրէք նրա ամէն մի որակումից ու խելակորոյս բռնակալների նման հրամայեցէք «Դողանալ «Շարժում»ը պատռել. մենա մարտութեան մտնել թերթի հետ. դա մեզ մեծ ուրախութիւն է պատճառում, որովհետև ցոյց է տալիս թէ հարածները ճիշդ տեղն են հասնում, նշտրակները ուղիղ ժահրոտ վէրքերի մէջ են

մտնում, ու հայ ժողովրդի աչքի առջև գուրս թափում պարզելով վերքերի եղած տեղերը:

Պ. ԳԱՆՓԱՆԸ
ՀԱՍԼԻԹԻ ԳԵՐԻՆ ՄԷՋ

Հոգեկան ու գեղարուեստական բարձր վայելքներէ գուրկ միջավայրի մը յուսահատեցուցիչ միօրինակութեանը մէջ տարիներով ապրած մէկու մը համար, զիւրին է հասկընալ թէ ի՞նչ անկարագրելի յուզումով ու աննզով սպասեցինք օգոստոս 27ին, որ ատեն, Պ. Գալֆանան՝ արդի հայ սերունդին անզուգական դերասանը, պիտի ներկայացէր Համլէթը:

Վերջապէս հասաւ բաղձալի ժամը, թատրոնը լեցուած էր այնքան որքան պէտք էր եթէ ոչ նիւթապէս, գէթ բարոյապէս քաջալերելու համար պ. Կարապետ Գալֆանանը:

Ներկայ հասարակութեան դէմքերուն վրայ կը կարգացուէր մեծաքանակութեամբ արտակարգ տեսարանի մը սպասող աննկագիր վիճակ մը. համակրանքի, հպարտութեան եւ գոհունակութեան իրաւունքը արամազրութիւն մը, որ աւելի ճիշդ կըլլայ նմանցնել, իրենց սիրական գաւկիտ պարզեւարայնութեան օրը շահելիք մրցանակները զիտելու եկած ծնողները աչապտուալից ու սրտագրաւ սպասումին: Եւ իրաւ ալ, ազգային ճգնաժամին սա չարատանջ տարիներում, պ. Գալֆանանը մեզ կը ներկայանայ իբր սփոփարար ու մըլխիթարիչ հրեշտակ մը, որ կարծես պաշտօն ունի անգործելու հայ մըտքերը ու հոգիները ըսելով՝ հոգ մի ընեի, հայ ճաղանդը չի ոչնչացած: Որքան երկար կը թուին ժամերը երբ մարդ խիստ բաղձալի բանի մը

մը կըսպասէ. ժամացոյցին սլաքը որքան դանդաղ քայլերով եկաւ հասաւ 9 թուանշանին, որ ատեն գովելի ճշդագանութեամբ մը վարագոյրը յամբարէն բարձրացաւ:

Չորսէն աւելի ժամեր որոնք շատ կարճ թուեցաւ մեզ, առանց ձանձարոյթի, առանձ յոգնութեան, բարախուն սրտով, սեւեռարիք ու հեղինակ հետեւեցանք ազնուական նուրբ, մռայլ ու թախտու էութեան մը հոգեկան խոսիչներուն. յուզումներուն եւ վարանոտ, ջլալի մարգու մը տատամստ ու անստոյգ վիճակին յատուկ բոլոր ցաւատանջ գալարումներուն: Պ. Գալֆանան հասարակութեան մտքին ու զգացումներուն ուժգնութիւն տիրելու մոգական արուեստ ունի, կիանքի տազնապի յուզիչ շարժումներով, խոսուածքի ձայնի, շեշտի ու մանաւանջ նայւածքի ի՞նչ հիանալի ու ապշեցուցիչ բնականութիւն: Այն օտարականները որք եկած էին գերազանց ներկայացում մը ըմբռնելու համար, առանց տեղեկ ըլլալու իր խօսած լեզուին, հասկցան անշուշտ թէ ըզգացումներու ի՞նչ մեծ պայքար մը տեղի կուենար յուզումէն ելելով իր կուժքին մէջ, թէ ի՞նչ անեղ փոթորիկ մը կը գոռար իր գանկին մէջ:

Իր աչքերէն երկնցող խորունկ արհամարհանք՝ յանկարծ կը փոխւէր ատելութեան, ըմբոստացումի ու վրէժի վայրագ արտայայտութեան մը: Քիչ վերջը փոխուելու համար դառն ու թախտալի եւ սուր հեզնութեան մը որ հոգիդ կը խոսուէ:

Շէքսպիրի գրական արուեստին յաւակնելը եղող իրական ու տեսական զգացումներու խոսունորք ներդաշնակութիւնը, խաչին հերոսին մերթ խիստ իրական, մերթ անըմբռնելի, մռայլ ու խորախորտուրդ զգացումներուն յաջորդական շարքը հաւատարմորէն ցուցուց Պ. Գալֆանանը:

Եւ այս զգացումները փոխելիքով արտայայտող նայուածքին հրաշալի ու զիւթիչ մոգութեամբ պահիկ մը մոտցնել տուաւ մեզ կեանքին բոլոր աննկարելիները, ճշմարտութիւնները եւ ազդեցութիւնները. իրեն հետ, իր հոգիին բարձր թօններուն հետ վերացնելով նաեւ մեր հոգիները զէպի վե՛ր. վե՛ր վե՛ր, զէպի անծանօթին ու վտմտի սահմանները: Մէկ խօսքով՝ Պ. Գալֆանան խաղին ամբողջ տեսողութեան միջոցին յուզումի եւ հիացումի անմոռանալի ժամեր ապրեցուց մեզ. հուսկ ուրեմն մարդուն էութիւնը դրդեցնող մահուան պող սարսուռը սահեցնելու համար մեր վրայէն երիտասարդ կեանքի մը վաղահաս հոգեվարքին սրտածմելի կծկումներով, աղետարշտանգանկներով եւ սարսուռի ցնցումներով:

Ուսեղանավորութեան ի՞նչ տպաւորիչ վայրկեան երբ ներկայ հասարակութիւնը սրտագին սկեցցէններով եւ ծափելով թնդացուց թատրոնը: Սակայն ինչ ցաւագին ու տխուր հրապոյր մը ունէր այն ծաղկեփունջը որ իրեն նուիրուեցաւ. տխուր, շատ տխուր այլ պեճախօս այդ փունջը կարծես պաշտօն ունէր ըսելու՝ Ամիրի Գալֆանան, հոգիին յօժար է բայց աւա՛ղ. քսակին տկարս: Վառնայի հայտնի թիւերը եթէ ի վիճակի ըլլար, շէ՛ր արմըր որ այդ փունջը, զինքը կազմող ծաղիկներուն իւրաքանչիւր թուով, օսկի թափալ մը պարունակէր իր խորը. ատով զէթ շատ պզտիկ փոխարինութիւն մը ըրած պիտի ըլլայինք հայ ցեղին պատիւ բերող Տիւրքիսիկ սղեբազուին որ իր կեանքը, հոգիին, երիտասարդութիւնը եւ ամէն ինչ որ սիրելի է մարդկային արարածին զոհած է իր ընտրած ու զոհած սպարազին համար: Շատ խորագրեցիկ ու մեղամաղձիկ

էր տեսարանը երբ պ. Գալֆանան ազնուական ու թախտալի միտով մը ընդունեց այդ ծաղկեփունջը եւ ծափախոյնները:

Եւ երբ այս շքեղ տեսարանը վերջացաւ, այն ատեն պաշարեց գմեղ անհուն թախտ մը որ յառաջ կուգար հոգեկան վայելքի մը բաժանումէն եւ յանկարծական անհետացումէն, բանի մը, որ քանի մը օրերէ ի վեր զբաղեցուցած էր մեր մտքերը մոռցնելով կեանքէն անբաժան բազմազգաղ հոգեբեր, տախտուութիւնները ու ցաւերը...

Մինի

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ
Ֆ Ի Լ Ի Պ Է Է Ն
— 0 0 —

Յարգելի Պ. Վարդօ. Կայարաններու եւ գրեզներու մէջ գոնուած դրօշակեան ընկերները՝ իրենց անկեղծութիւնը եւ անկողմնակալութիւնը ցոյց տուին տեղիս Մոսկովի եւ Տօլանտրէի անձերէ բաղկացած կոմիտէին բարոյական ապտակը տալով նոր թերթի համար ու զարկուած ընկալագրերը ետ զրկել ըսելով թէ՛ յեղափոխութեան գրաւով թերթի չի հրատարակուի՛ր պէտք է բուն նպատակին ծառայեցնել՝ ոչ թէ Ֆիլիպի մէջ գտնուած մէկ-երկու թափթիկը անօթիներու անօթի փորերին կշտացնելու համար միջոցներ ստեղծելով, եւ միւս կողմէ ալ Պ Վարդօի զէ՛մ պայքար մղելով իրենց վատ կիրքիւրուն գոհացուած տալ. ո՛չ, ազանկարելի է: Ամբողջ կուսակցութիւնը այս միջանի խլիզ խալիկները շեն որ պիտի կատարեն իրենց ուղածի նման: Այսօր պրօպականդին է՝ իրենց միջանի միամտները խաբելու համար թէ

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԷՅՔ

Գ Է Ֆ Ի

Հայկական Ռօման մը
(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

ԳԼ Ե.

Ք Ա Ր Ա Յ Ի Ը

Մէկ ժամուան ճամբորդութենէ վերջ, որուն միջոցին բառ մը իսկ չէինք փոխանակած իրարու, հասանք լեռներուն ստորաք, որոնք լուսապատկերային արշալոյսին մէջ յստակօրէն կը նշմարուէին: Հոն կեցած էին անոնք. իրենց հսկայ կատարները տիտանեան ստուերներու նման իբրբու վրայ բարձրացած, մինչեւ որ հեռուն ամպերու պատուածներուն մէջ կը կորուսէին. Բայց նոյն իսկ երբ կը պնէի. կարմիր ճաճանջ մը լուսաւորեց կատար մը. միաց հոն քանի մը ըսէի, ապա, բոցաւառ փայլակի մը պէս մէկէն միւսը սողաց, մինչեւ որ լեռան բոլոր կատարները լուսավառ փառքով մը շուրջապարզի սկսան: Հրճուածքի ու հիացման ճիշդ արձակեցի. Սիւլէյման կանգ առաւ ու ձին մէկ կողմ քաշեց: Յետոյ, ինձ դառնալով ըսաւ.

— Այո՛, Դէֆի, արշալոյս է. ըսպէ՛ մը անգամ կանուխ չէ, և կը յուսամ թէ ուշ ալ մնացած չենք: Այս լեռան կատարները մեր թշնամիներուն—բիւրտու ուն—գիտանոցն է. և եթէ ու ե խուճը ձեռքերնին ի՞նչայ՛ շուտով վերջ կը դնեն անոնց:

Մինչդեռ մենք մէկ կողմ կեցած կ'սպասէինք, միւսները մի առ մի անցքէն ներս մտան: Ի՞նչ հայր, որուն յանձնուած էր Միքէի հսկողութիւնը՝ էնոր ետեւէն կերթար: Ո՛րքան յոգնած ու զարկացած կերեւէր առաւօտեան լոյսով:

— Ինչ՞ Միքէս, ըսի, Դէֆիդ շատ հանգիստ է: Բայց ան երեսս անգամ նայելու ոչ չ'ընէր:

— Միքէ՛, Միքէ՛, կրկին ձայնեցի. բայց էն առաջնորդին ետեւէն կիրճը մտած էր ու միւսներն եւս հետեւելով իրեն, կորսնցուցի տեսողութեանս: Ո՞ր հառաչեցի, սակայն Սիւլէյման ժպտեցաւ:

— Կը տեսնես, իր շարճնի երեսայէն ձեռքերը լուաց էն:

— Ո՛չ ո՛չ. Միքէն մինչեւ մահ հաւատարիմ կը մնայ: Գիտե՛մ ու վստահ եմ ստոր:

— Այս անորոշ աշխարհին մէջ, սիրուն երգչուհիս, շատ լաւ է ամեն բանի վստահ ըլլալը: Բայց, անս, վերջին մարդը անցաւ կիրճէն: Հիմա կարգը քու կ'է:

Թամիին վրայէն վար առնելով՝ գետնը դրաւ: Գիտես տատանեցաւ

և ինչալու վրայ էի, սակայն ան թեւերուն մէջ բռնելով՝ կուրծքին սեղանեց զիս: Վայրկեանի մը համար էր այդ բայց հազուագրեւ բան մը չէ որ մէկ ըսպէն բովանդակ կեանքի մը ճակատագրերը կ'ընէ:

— Արիանալու ես հիմա ըսաւ ան, ինձ շրջապատող թեւերը ետ քաշելով.— Կը խոստանաս, կրնաս: Անսահման գործով մը կար թրթռուկ ձայնին մէջ, Կը Նկատե՛ր արգեօք թէ տակաւին կը գողըջէի: Պատասխանելու համար թառեր չէի կրնար գտնել: Ի՞նչ էր այս արտակարգ անհանգստութեան նշանակութիւնը. ինքզինքս արհամարհել սկսայ. Ճիգ մը ըրի այս յուզումնքս փարստել:

— Ի՞նչ կուգես որ ընես, ո՛վ Սիւլէյման:

— Երա՛ւի թէ շտապուէի առաջարկել, քաղցրիկ երգչուհիս, բայց ըսպէ՛ մը չ'ընէրք կորսնցնելու: Դուն պէտք է առաջ անցնիս և ես... երեսը ազօտեցաւ.— և ես Հուրիս հետեւէն կը հետեւիմ. Այսպիսի դեռատի և անփորձ մէկու մը համար անհելի շարժարանք ս'է կիրճերուն մէջ, բայց...

— Ա՛հ, Սիւլէյման, դուն չես գիտեր վիս. ես աներկիւղ եմ, ես իմ հայրերուս Աստուծոյն կը վստահիմ: Եւ առանց ուրիշ բառ մը արտասանելու՝ խիզախորէն կիրճէն ներս մտայ: Կիրճը այնքան շուտով կը գառնար, որ մեր խուճը, որ դեռ նոր

մտած էր. բոլորովին աննշմարելի էր: Վերելքը խիստ զարմանալի էր, և ուրիշ բանի չէր նմանէր, բայց եթէ հսկայ քարակոյտներէ շինուած օձապտոյտ սանդուխի մը, Բոլոր զգուշաւորութիւնս և արագաշարժութիւնս հարկաւոր էր ոտքս ամուր պահելու համար: Մարդկային ոտքերէ աւելի լեռնային եղջերոյի մը ճամբայ էին այս խորտուրտ ժայռերը, որ իմ քաջարի հայերս իրենց թագստոցը կատաղեցրէր: Ո՛րքան տարօրինակ կերպով ծախուցայ այս բոլորին: Սակայն փիլիսոփայելու ժամանակ չէր: Գիտէի թէ Սիւլէյմանը ետեւս էր, և իւրաքանչիւր օրպէ կը վարնայի Հուրիին իր տիրոջ հետ միասին ժայռերէն վար թաւալումին ձայնը լսել, Բայց և այնպէս, այսպիսի ճակատագրային վտանգի մը մէջ իսկ չէի համարձակեր ետիս նայիլ: Ի՛նչ, զէպի վե՛ր ցցուած էին օձապտոյտ պատեխները:

Վերջապէս քաղաթը հասաւ: Հարթ հողին վրայ կանգ առի. երկար շուշնջ մը քաշելով գարձայ ելքը զիտելու, երբ անս, Սիւլէյմանն ու նժոյգը, բնականաբար վարժ սոյն լեռնականի ճարտարութեան քովս կեցան: Տեղերնիս պատկերի, որ հագիւ տեղ կայր կանգնելու, մինչդեռ, երկու կողմէն պտերներով եւ լեռնային ուրիշ բոյսերով ծածկուած գահավէժ թումկեր վեր բարձրանալով, մեր գլխուն վե՛

Ֆիլիպէէն «Շարժում ին բնաւ տեղեկութիւններ տուող չոր կայ այլ շարժուման վարդուն ինք իր կողմի կը շինեն կոյ այլ գրուածները : Մայտատակներ : հիմալ «Շարժում» յարգոյ ընթերցողներին փաստով ցոյց պիտի տանք թէ Ֆիլիպէի այժմեան դրօշակեան վարդունը ինչ ստախօս եւ ստորին տիպեր են . որոնք կը ճգնին ծածկել իրենց մէջ եղած պառակտումը ըսելով թէ մեր ընկերները «Շարժում» Ֆիլիպէէն բնաւ տեղեկութիւններ տուող չի կայ . այլ վարդուն է որ իր կողմէն կը շինէ եւն . եւ հետաւոր ընկերներն ալ այսպէս կը խաբեն : Բայց իրողութիւն է որ տեղեկութիւնները տրուած են դրօշակեան ընկերներէն՝ դրօշակեանի օրգան «Շարժում» ի . եւ մեր ընկերներու տուած տեղեկութիւնները անհիմն հանելով վարդուն կը զրպարտեն թէ՛ ան ինք իր կողմից չինած է : Ինչպիսի ստախօսութիւն . մեր մէջ եղած խոզովութիւնները հրապարակ կելլէ եւ հնչակեանները լսելով իրենց օրգան . ընթերցողը Հայաստանին կը գրեն : առէք այդ թերթի երբորդ տարի թիւ 12ը եւ պիտի տեսնէք մեր գրութիւնները հաստատող ճշմարտութիւնը թէ մերոնք գրած են թէ Պ. վարդուն չինած է . եթէ ազնիւ ու անկեղծ են թող քաջութիւնը ունենան Ֆիլիպէէն տրուած տեղեկութեանց մէկ բառը . չըսեմ աւելին . հերքեն . ոչ թէ ուրանան : Միթէ սուտ են Ա. Տիգրանեան՝ ման թարծի Զօրեանի զպրօքի մէջ եղած զանգուշակ ժողովին մէջ Պ. վարդուի հասցէին թափած սուր սլաքները : Միթէ սուտ է Ռուսահայ տղեկի բորքաքաղից հայնոյութիւնները . ո՞ր մէկը թուեմ «Շարժում» ի սուղ էջերու մէջ : Միթէ՞ սուտ է տուանտրծի Ապրօյի հայնոյութիւններ

Պ. վարդուի հասցէին՝ ընկեր Պ. Հի պատասխանը որ փափկասիրտ եւ կոչ սասիրտները դողողալով հարցեր ուղղեցիք : Ա՛հ սինլքորներ ձեր ամբողջ Վարդօ մը կարծէ՞ք . ա՛նօթիներ :

Այս պահուս կը լսենք թէ Պ. ի սրճարանի մէջ Պ. վարդուի երկու համակիր դրօշակեան ընկերներ վիճարանութիւն կուենան երկու հակակիր վարդօյականներու հետ . հակակիրներէն մին որ մարդկային տարրական պարտականութիւնները բնաւ չի յարգեր ու չի գիտեր ու նաեւ զուրկ է... Իրաւարարի պաշտօն ունեցածի նսան վճիռներ կարձակէ Պ. վարդօյի մասին(1) մենք առ այժմ այս ցնդած ժամանակ չի պիտի գրենք՝ խոստանալով առաջիկային պատկերացնել այս ողորմելին ո՞վ է եւ ինչ տեսակ արարած մըն է : Գանք միւսին . ո՞հ այս այն հոչակաւոր տուանտրծի Ապրօն (վահան) է որ ի խայտառակ պատկերը նկարուած էր «Շարժում» ի 734 թիւի մէջ՝ ու կատարեալ հացկատակ՝ Տօլանտրծի . խաբեբայ հայնոյի մըն է եւ իր գոյնը ու իկարը «Շարժում» ի 734 թիւի մէջ պատկերացուելէ յետոյ աւելի կատարած «Շարժում» ի յարգոյ խմբագիր Պ. վարդուի հասցէին նախատինքներ կը տեղացնէ :

Մինչդեռ մենք հրապարակով փաստերով եւ վիճակներով կը հաստատենք թէ այս տուանտրծին բնաւ անհնալ չի գիտեր . ամբողջ Ֆիլիպէի հաստարակութիւնը տուանտրծի ընկից յետոյ ալ երես չէ մնացած քովը որ մէկէն հիմա փարայ ուղե ուտելու՝ աւելի մնալու վախէն այժմ աչքը՝ յոյսը եւ հաւատքը գրած է յեղափոխական փշրանքներովը կշտանալու . ատոր համար . այս արդէն ծոյրը՝ բանը գործը ձգած սրջարանէ սրճարան 66 խաղաղով պրօպականը կընէ . վարդուն վարկարեկելու . Ու այս Ապր

րօ այն գուշազան տուանտրծին է . որ իր խաբեբայութեան համար Պ. ի սրճարանի մէջ Աստուր աղբարը լաւ մը ծեծեց . Այս այն ընկերադաւ մատնիչն է որ իր խոսքի իր ընկերը Գ. կառավարութեան մասնեց իրեւ ոճարար . զիս պիտի սպաննեն ըսելով : Այս ինկածին որ մէկ արաքները գրչի առնեմ . ահա այս տիպերն են որ ազգի մը . յեղափոխութեան մը ճակատադրին հետ խաղաղով՝ իրական յեղափոխականները վարկարեկելու կը տգին . Բայց այս տեսակներու գրածներու . խօսածներու սրգէն կարեւորութիւն տուող չը կայ իրենց ճիշդին ալ Պ. վարդուն վրակարեկելու ի զո՛ւր են ի զո՛ւր...
Թպտեալ

Ն Ա Մ Ա Կ Ֆ Ի Լ Ի Պ Է Է Ն
— 0 —

Կը լսենք թէ՛ տեղիս Պատ. Հոգաբարձութիւնը՝ տարիներէ վերջ փորձով համոզուեցաւ թէ՛ Ալգային դպրոցի այդ սրբազան յարկի տակ իբր դաստիարակ գտնուող հանրածանօթ կրօն Միքայէլսանը . որ իր փոտած պատուելիական սիստեմովը չէ կրցած ո՛չ մէկ առեն իրական օգտակարութիւն մը ընձեռել մեր մատաղ սերունդին . ինչու որ կը պակտի իրեն այն բարձր կոչումը եւ էական յատկութիւնները առաջիկայ տարեշրջանին համար անպէտք է՝ զայն մերժած է նորէն իր պաշտօնին կոչել . խնայելով փոքրիկներուն : Մենք ի սրտէ ուրախ ենք պատ. Հոգաբարձութեան այս յոյժ կարեւոր քայլին . այսպէս պէտք է

զգուշանալ այդ շուկայամիա պատուելիին յանձնել կրթական տունը՝ որպէսզի չի խամրին հոն իր ապագայ սերունդը պճնազարգելու կոչուած արգի գեռաբոյս ծաղիկները :

Վերջերս Ատրիանուպօլսոյ մէջ՝ ըստ սարածայնութեանց . 5—6 հազար տուն . եւ ոմանց նայելով հազար վեց հարիւր տուն . գեռ ստոյգ լուր մը չի կայ թէ ո՞րքան տուն . հրոյ ճարակ եղած է . բայց իրողութիւնը այն է որ ընդհանրապէս զիստուողներու մեծ յարաբեր են . խեղճ հայ . աշխարհի մէջ ի՞նչ դժբախտութիւն պատահած է ու ինք զերծ մնացած է... Տեղիս հայ վաճառականները թուականէս մէկ օր առաջ տեսնելով թէ հրեաները հանգանակութիւն կընեն . իրենք ալ ազգուելով այդ քայլէն հանգանակութեան ձեռնարկած են . կը յուսանք թէ պիտի յաջողին եւ բաւական համեստ գումար մը գոյացնելով՝ պիտի հասնին օգնութեան Ատրիանուպօլսոյ մեր դժբախտացած հայրենակիցներուն : Գովելի ձեռնարկ . Երանի թէ Պուկարիոյ բաղձահայ բոլոր քաղաքներն ալ հետեւէին Ֆիլիպէի մեր հայ վաճառականներու քայլին . որովհետեւ դժբախտութիւնը խիստ ծանր է թշուառութիւնը խիստ շատ է...
Պէտք է օգնել թշուառներուն .

րեւ կը գոցուէին :

— Մինչեւ հոս ապահով է . ըսի գրեթէ ցնձուեկամբ . Մեծ հանգստութիւն մ'էր ինձ համար Միւլէյմանը անվտանգ տեսնել . սակայն . անշուշտ չէի ըսեր թէ մասնաւոր անձկութիւն մը կզգայի իրեն նրկատմամբ : Նժոյգին պարանոցը շսյելով ըսի վարանոս . «Շատ ուրախ եմ որ Հուրին ապահով մինչեւ կատարը հասաւ :

Կապիւնտ . հարցական նայուածք մը եկան Միւլէյմանի աչքերուն : Այնքան պերճօրէն ազգու էին այդ աչքեր . որ լեզուն չէր կրնար զանոնք գերազանցել . «Մ . աւ վարժ է ատոնց . Գու համակրանքը բաղդատաբար նուաստ անասուններուն համար սահմանուած է :

— Ո՛չ . սակայն աւելին ըսել անհնար կզգայի . Հարցումը տակաւին աչքերուն մէջն էր . Կեղծողի արիւնք կայրէր այտերս : Պարտութիւնը ահաւոր էր : Փոխելով խօսակցութեան նիւթը՝ ըսի . «Ո՛ւր պիտի երթանք հիմա . ո՞վ իմ հրամանատար :

Հարցական նայուածքը հիացման փոխուեցաւ :

— Դուռն արի լեռնական մըն ես : Այժի նման քայլէ քար կը ցատկերտեսա : Հաղիւ գիտելու ժամանակ ունեցայ հետեւած պահուս . Այո՛ . վրստան եմ թէ Ժանի գերը խիստ զեղեցիկ կերպով պիտի կատարես .

Հըջօրէն էր . կը տարակուսէի եւ

չէի ալ համարձակեր աչքերուն մէջ նայիլ թէ արդեօք կը ոտէին իր խօսքերը : Այսուամենայնիւ . այս օտարական թուրքէն լսած դրուստիքներս քաղցր էին ինձ համար . Ո՛հ . Ի՛նչքի . դեռ անմիտ երեխայ մ'ես .

— Աւելի յառաջ երթալու պէտք չկայ այլեւս ըսաւ ան լուպէական լըռութիւնէ մը վերջ . որու միջոցին երեսքս արտայայտութիւնը կը կարողար . «Մեր թագաւորը հոն է . եւ ձեռքով թուփին վրայ կախուած խոշոր ճիւղ մը բարձրացնելով . սովորական մեծութեամբ շուն մը անցնելու չափ բաց ծակ ըր տեսայ :

— Հո՛ն . գոչեցի :

— Այո՛ . իմ անվեհճի լեռնականս պիտի յաջողի՞ ներս մտնել :

— Կը սողամ . Երկուքս ալ ժպտեցանք . եւ դուռն . հարցուցի :

— Ես ուրիշ վերելք մ'ալ ընելու եմ Հուրինին հետ : Մուտքը իրեն համար բաւականաչափ մեծ չէ . Ան իրեն համար մասնաւոր քարայր մը ունի լեռան աւելի բարձրը . Բայց մինչեւ որ քու ապահով ներս մտնելը չը տեսնեմ . չեմ կրնար հեռանալ . Միքէն հոն պիտի գտնես :

— Հո՛ն . կոչեցի ծակը ցոյց տալով : Հաւանութեան շեշտով մը ժպտեցաւ . եւ... եւ... քեզ պիտի տեսնեմ կրկին : Զայնիս մէջ անզուսպ տենչ մը կար :

Այսուհանդերձ այդ հաճելի երեւցաւ Միւլէյմանի . որովհետեւ քմծի

ծաղ մը անցաւ դէմքին վրայէն . «Բառօրդ ժամէն» :

— Այն ատեն ես ալ գայրուել . արջերուն ու գայլաշուններուն մէջ պիտի երթամ . Բայց տակաւին կը վարանէի . Ի՞նչպէս կարելի էր հերոսիս առջեւ ձեռքերուս եւ ոտքերուս վրայ ծնելով՝ ծակէն ներս սողալ... Կացուելու ծիծաղելի էր : Այսերս կայրէի . Անորոջ դրութեան մէջ կանգնած էի ու ան անստոյգ զիս կը զիտէր . Հրամայական ձեւ մը առնելով ըսի . «Ես կերթամ կոր . սպասելու հարկ չկայս :

Վերջապէս հասկցաւ . Թամփը շտկել ձեւացնելով փոքր ինչ կոչուութեամբ կոնակը ինձ դարձուց . Նոյն պահուն ծուկերուս վրայ էի եւ նե՛րս մտած . «Աստուած իմ . գոչեց Միքէն գետէն վեր մագլցելով . ու յաջորդը պէտք իր բազուկներուն մէջն էի . եւ կրկին ու կրկին կը սեղմէր զիս այն հաւատարիմ սրտին . որ ինձ համար միայն կը բաբախէր . տակաւ առ տակաւ արձակելով զիս . կրցայ շուրջս զիտել . աչքելիս . վարժուած ըլլալով միութեան . անմիջապէս նրկատեցի շրջապատս . լաւնածաւալ քարայրի մը մէջ էի . բաժանմունքը ներով եւ խոռոչներով . որոնք մարդկային աշխատանքի դրոշմը կը կրէին . մտած անցքիս մօտ խոշոր քար մը կար . վտանգի ատեն մուտքը գոցելու համար . մէջտեղը շոճի ճիւղերով պատրաստուած կրակ մը կը բոցա-

վառէր . չորս կողմը ջերմութիւն եւ հեշտալի բոյր մը սփռելով . Ասոր վրայ . եռոտանի մը վրայ . դրուած էր խոշոր կաթասայ մը . պղպղակելով . Ֆիշով . ու արտօթելի հոտ մը արձակելով իր մէջէն . որ այս հուժկու արարածներուն . իրենց գիշերային ճամբորդութենէն վերջ խիստ հաճելի ըլլալու էր . բայց ինձ համար . երկարատեւ անօթութենէ եւ յոգնեցուցիչ յուզմունքէ մը յետոյ . տաղապալի էր . այնպիսի նուաղում մը կը զգայի . որ չի յնալու համար Միքէին փաթուեցայ . իր առաջնորդը . որ բաւական հեռուն կանգնած էր . ցած ձայնով քանի խօսք ըսելով՝ մեզ քարայրին մէկ հեռաւոր անկիւնը առաջնորդեց . «Ժամանակաւոր պահպանակով մը միւս մասէն բաժնուած անկիւն մը . ներքը . մորթով ծածկուած կոշտ բազմոց եւ ժայռի կտորի մը վրայ դրուած հոտաւէտ իւղով վառուող կանթիղը որ իր բոյրով ամենուրէք խնկարկած էր . ուշադրութիւն գրաւեցին . բայց ինչո՞ւ . Ի՞նչ է այս . լոյսը մարեցաւ . մութին մէջ մնացի . տատանեցայ . . . Գետին ինկայ . . .

(Շարունակելի)

